այս , գնացին երեւելի ընծայիւք առ մեծ իշխանն , Վէզիր Քէհեայէ ստացեալ և խոստացան նմա 30.000 դահեկան · եթէ 'ի վերայ Մարտիրոսի դարձուսցէ զՊատրիարքութիւնն Երուսաղէմի ։ Կոչեաց իշխանն զԱպրօ Չէլէպի՝ եւ ասէ ցնա՝ ահա այսչափ խոստացան 'ի միւս կողմանէ · դու զի՞ ասես վասն Եղիազարուն քո · եթէ կամիս լսել ինձ , զ5000 դահեկանս շնորհեմ քեզ · տուր 25,000 , և հաստատեա զքոյդ ։ Բայց Ապրօ որ այսպիսի առթի սպասէր , գիտելով թէ յիւր կողմն է Նպարքոսն և այլ մեծամեծք՝ կամէր սակաւ դրամովք 'ի գլուխ տանել զիրսն · այլ այսու ամենայնիւ խոստացաւ իշխանին 20,000 · սակայն իշխանն ոչ առ յանձն · սմին իրի յապաղէր բանն ։

Հանդերձեալ էր Նպարքոսն գնալ 'ի նոյն աւուրս 'ի պատերազմ 'ի վերայ Կրետեայ կղզւոյն · եւ իբրեւ ել 'ի Կոստանդինուպօլսոյ հանդերձ բանակաւ 'ի տեղին կոչեցեալ Տաւուտ Փաշա՝ արտաքոյ քաղաքին՝ հեռի իբր երեք ժամու , փութացաւ Մարտիրոս և մատոյց վերստին գիր աղաչանաց առ Նպարքոսն , կոչել 'ի դատ զԵղիազար · զի կարեւոր իրք կան ասէ առաջի , եւս և յանցանք մահապարտութեան են 'ի վերայ նորա ։ Զարմացեալ էին մեծամեծք Դրանն ընդ այնչափ համարձակութիւն Մարտիրոսի , եւ խօսէին 'ի մէջ իւրեանց վասն ջանից նորա թէ յինչ ունիցի վերջանալ ։

Առաքեաց Նպարքոսն արս՝ ածել զԵղիազար 'ի բանակ անդր , և 'ի նմին պահու մինչչեւ էր հասեալ Եղիազարու , մտեալ Ապրօ առանձին առ Նպարքոսն , խօսեցաւ ընդ նմա բազում ինչ , եւ հաճեցոյց զնա , զի բարձցէ իսպառ զիշխանութիւն Մարտիրոսի և Աստուածատրոյ յԵրուսաղէմէ , և տացէ զՊատրիարքութիւն տեղւոյն ցԵղիազար ։ Եւ եղեւ իբրեւ բերէին զԵղիազար , ընթանային զհետ նորա Թլթըլեանք բազմութեամբ , և ասէին պանծանօք առ Հայս՝ որք ժողովեալ էին անդր , այսօր ահա բառնամք զԵղիազար 'ի կենաց · պատասխանի ետուն ոմանք 'ի ժողովրդենէ և ասեն ցնոսա · եթէ տայք սպանանել զնա , թաղեմք պատուով ըստ օրինի Մարտիրոսաց ։

Ցորժամ յանդիման եղեն Նպարքոսին Մարտիրոս և Եղիազար , խօսեցաւ Մարտիրոս եւ ասէ · ով բարերջանիկ